№ 74 Մայիսի 7 (19) 1880 Մայիսի 7 (19) № 74

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Մացի կիրակի և տան օրերից)

Գայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Գայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Հայոց թատրոն։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Գանձակից։ Նամակ թէլուից։ Նամակ Բագուից։ Ներքին լուրեր։— Արտաքին տեսութիւն։ Հայաստանի գրութիւնը։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր —Գայտարարութիւններ։ — Բանասիրական խնդիր։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

—

Ուրբաթ, մայիսի 2-ին, հայ դերասանական մշտական խումբը Ամարային թատրոնում տուեց «Երու Քոյր» դրաման, հեղ. Եմիլ դը Ժի արդէնի, թարգ. Ֆրանսիերէնից պ. Աբգար Յովհաննիսեանի, զուարճալի և կենդանի պատկերներ, յօգուտ նոյն խմբի յուշարարի (սուֆլիօրի)։ Հասարակութիւնը լցրել էր թատրոնի դահլիճը (շատ քիչ դատարկ տեղեր կային) արժանապէս վարձատրելու յուշարար պ. Մատինեանի անտեսանելի և անշահրկակալ աշխատութիւնները։ Մենք ուզում ենք համարում մանրամասնաբար պիէսայի բովանդակութիւնը պատմել, որովհետև շատ հեռու կը տանէր մեզ, միայն այդքան կասենք, որ պիէսայի մէջ միայն կար, տենդենցիա կար և նրան ներկայացնելու համար հարկաւոր էր, որ մեր դերասանները լաւ ուսումնասիրէին և սովորէին իրանց դերերը, և մի փոքր ևս դիւրաշարժ և դիւրաթեք լինէին բեմի վրա։ Բայց որովհետև դերասաններից ոչ մէկը ոչ ուսումնասիրել և ոչ սովորել էր իր դերը, այդ պատճառով պիէսան շատ սառն անցաւ և առաջին զորձողութեան ժամանակ համարեա բոլոր հասարակութիւնը օրորվում էր։ Օրինակ, դերասաններից մէկը՝ պ. Զմշկեանց, որ Բօբեր դը Պիւերրին խաղաց ամուսնի դերն էր կատարում, բայի նրանից, որ դերը չը գիտէր, բայց և, ինչպէս միշտ, երգում էր և մէջտեղում ձայներ էր հանում դերը յիշելու համար և խեղճ բենեֆիցիանտ Մատինեանը իր անհնարանձիկ խուցից կոմորդը պատում էր լսելի անելու համար իր ձայնը։ Առհասարակ, վերջին ժամանակներում պ. Զմշկեանը յաջողութիւն չունի հայ բեմի վրա և հասարակութիւնը միշտ դժգոհ է մնում նրա խաղից։ Մենք մի համեստ խորհուրդ կը տայինք պ. Զմշկեանին՝ թողնել թատրոնական բեմը և զբաղվել իր մասնաւոր զորձերով. բանական է ինչ որ ծառայել է նա հայ բեմին, թող ամէն մի դերասան այդքան ժամանակ և այդքան եռանդով ծառայէ հայ բեմին և հասարակութիւնը շատ զոհ կը լինի նրանցից։

Վերցնենք մի ուրիշ օրինակ. պ. Սուքիասեանցը կատարում էր դուքս Արման դը Բօլիէօի՝ խաղված ամուսնու՝ Բօբեր դը Պիւերրինի կնոջ սիրահարի դերը. մենք զարմանում ենք, թէ այդ դերասանը ամբողջ տարի խաղալով հայ բեմի վրա, չը կարողացաւ զրանել իր ամպլուա, իր ուժերին յարմար դերեր, և շատ քիչ բացառութեամբ, միշտ անպզտութիւն էր ունենում և այդ ներկայացման ժամանակ ևս անպզտութիւն ունեցաւ։ Ահա տպագոյց. բեմը ներկայացնում է մի փառաւոր զարդարված սենեակ, ուր երկու սիրահարները՝ դուքս Արման դը Բօլիէօ (Սուքիասեանց) և Վալենտին դը Պիւերրին (օր. Ասպիկ) Բօբեր դը Պիւերրինի կինը կանգնած խօսում են միմեանց հետ։ Վալենտին դը Պիւերրինը տեսնելով, որ իր ամուսինը իմացել է իր գէպի դուքսը ունեցած յանցաւոր սէրի մասին, նա յուսահատված վճռում է փախչել իր ամուսնու տնից սիրելիի հետ։ Սիրուհին արտասուալից աչքերով և վերջը ծնկաչոք ազաչում է իր սիրահարին փախչել միասին. այդ սրտաշարժ բոպէին դուքսը՝ պ. Սուքիասեանց, ինչպէս մէկ մարմարի արձան կանգնած բեմի մէկ կէտի վրա, ամուսնամի նման պատասխանում էր իր սիրուհու թախանձանքներին, կարծես թէ նրա ամէն մի շարժուածքի համար մեծ տուգանք էին առնելու նրանից։ Մի խօսքով պ. Սուքիասեանցը ոչ դուքսի շարժուածքներն ունէր և ոչ սիրահարի ազատութիւն իր ձեւերի մէջ։

Իսկ ինչ վերաբերում է Գենգակին (Աւագեանց), որ Բօբեր դը Պիւերրինի տան շատ տխուր բարեկամի դերն էր կատարում, նոյնպէս վատ էր։ Պ. Աւագեանցը մէկ մեծ պատասխանութիւն ունի, որ միշտ փչացնում է բոլորովին նրա խաղը. նրա շարժուածքները և ձեւերը շատ կոպիտ են, և այդ մանաւանդ նկատելի է և աչք է ծակում երբ նա Ֆիբրանխացիների դերերի մէջն է բեմ դուրս գալիս։ Օր. օր. Ասպիկ և Սիրանոյշ վատ չէին իրանց դերերի մէջ։

Այժմ մի քանի խօսք ևս ամենը զուարճալի մասին։ Ինչքան որ պիէսան սառն և վատ անցաւ, այնքան լաւ տպաւորութիւն գործեց և սթափեցրեց հասարակութիւնը օր. Ասատրեանը, կարգալով «Փոքրիկի զովասանքը» գեղեցիկ բանաստեղծութիւնը։ Հասարակութիւնը բուռն ծափահարութեամբ վարձատրեց զեղասանուհուն և երկրորդ անգամ ևս կրկնել տուեց այդ գեղեցիկ բանաստեղծութիւնը. օր. Սիրանոյշն ևս երգեց մէկ romance, որ նոյնպէս լաւ տպաւորութիւն ունեցաւ։

Գալով կենդանի պատկերներին, մենք զարմանում ենք կոմիտետի վրա, որ նա թոյլ է տուել այդպիսի խայտառակ պատկերներ ներկայացնել բեմի վրա։ Չը գիտենք, թէ ինչ կրթողական նշանակութիւն ունի «Երեան վանքասասանից յետոյ»-ի նման կենդանի պատկերները։ Կարծես թէ մենք՝ հայերս այնքան կրթվել ենք, այնքան զարգացել ենք, որ չունենք հասարակական ցաւեր և պակասութիւններ, և մեր ողորմած աչքերը դարձնում ենք այլ ողորմելի և խեղճ ազգութիւնների վրա, կամենալով նրանց ևս մեզ պէս քաղաքակրթված և ամէն պակասութիւններից զուրկ տեսնել։ Ուրիշ բան է և կրթող նշանակութիւն ևս կունենար, եթէ հրէայի փոխանակ ներկայացնէին մի հայ հասատաքր վաճառական փողոր հաթիլիս։ Մեզ վրա միշտ վատ տպաւորութիւն է գործել երբ տեսել ենք վրաց բեմի վրա, նրանց համարեա բոլոր պիէսաների մէջ, որ հայերը ներկայացրած են հար�քը զաղարել էր ամէն տեղ. զաչտերից չէր լրվում երկրագործի ուրախ երգը. արտամարգերի վրա անասուններ չէին արածում. ամէն ինչ լաել էր. ամէն ինչ գտնվում էր խուլ մեռելութեան մէջ. կարծես ապականութեան կործանիչ դեը զեռ նոր անցել էր այդ թշուառ երկրի վրայով և ոչնչացրել էր բոլորը, ինչ որ ստեղծել էր մարդու աչխատասէր ձեռքը։ Ինչ էր պատահել....

Ցուլիսի արեգակը սաստիկ այրում էր։ Կէսօրից բաւական անցել էր, երբ Վարդանը մտաւ Օ.... գիւղը։ Նա նմանում էր այն լեգենդական բնակութիւններին, որ չար կախարդի անէծքով միանգամից աւերակ էին դարձել։ Տները, ուր մի ժամանակ կեանք էր շնչում, ուր մարդիկ էին ապրում, այժմ դարձել էին նրանց գերեզմանը։ Ամէն ինչ թաղված էր փոշու և այլանդակ փլատակների տակ։ Վարդանը ուշակրութիւն խելագարի նման անցնում էր իր ծանօթ փողոցներով։ Տեղ-տեղ նա տեսնում էր մարդկային մարմնի մնացորդներ։ Անշուշտ այստեղ կատարվել էր մի սարսափելի կատաստրոֆայ, մի ահեռալի անցք։ Նա անցաւ եկեղեցու մօտից. Աստուծոյ տունը ոչնչով չէր որոշվում իր շուրջը գտնված աւերակներից։

Նա մտնեցաւ ծերունի խալֆի ամրոցին։ Շրջապարսպի պատերն էին մնացել միայն, այն ևս տեղ-տեղ քանդված։ Ներս մտաւ։ Դրա առջև բացվեցաւ մի ցաւալի տեսարան։ Ցան պարապէզը բոլորովին մերկացել էր ծառերից, այն գեղեցիկ և սառուերախիտ ծառերից, որոնց հովանու տակ անցուցել էր նա այնքան քաղցրիկ ժամեր Նազելի Լալայի հետ։ Այժմ ոչտեղ էր նա...Նրա համար էր եկած Վարդանը...Նրան էր որոնում այդ սրտխուր աւերակների մէջ... Մինչ յուշչակեց, տարաբ նրան քուրդ բէկը... Թէ ընկաւ նա տաճիկ զինուորի ձեռքը.... Վարդանին տիրեց մի տեսակ սոսկում, մի տեսակ քաղցնող սառսուռ, երբ յանկարծ բացվեցաւ նրա առջև սարսափելի իրականութիւնը։ Երկաթի մարդը, կարծես, միանգամից փչվեցաւ մի դառն և ամենածանր հարուածի ներքոյ։ Արիւնը սառցի

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

ԼԴ.

Դառնանք դէպի մեր պատմութեան սկիզբը։

Այժմ ընթերցողը, կարծեմ, ճանաչում է, թէ ով էր այն երիտասարդը, որ Բայազէդի բերդի սարսափելի պաշարման ժամանակ ընդունեց բերդապահ Շաուկվիլի ձեռքից Նամակը, և իրան խնդիր ձեռցնելով, մտաւ պաշարող քիւրդերի մէջ, անվտանգ անցաւ թշնամու բանակից, և մի քանի օրից յետոյ Նամակը հասցրուց գեներալ Տէր-Ղուկասովին։ Ընթերցողը նոյնպէս յիշում է, որ երիտասարդը, չընդունելով գեներալի առաջարկութիւնը՝ մնալ իր մօտ, թիֆլիսապահի պաշտօն վարել, փաքի և ասիճանի ուէր լինել,—թողեց ռուսաց բանակը և չտապեց մէկի կեանքը վտանգից ազատելու համար։

Այդ երիտասարդը Վարդանն էր։ Տեսնենք, ուր գնաց նա։

Հեծնելով իր ձին, ոչ թէ էր մի քրդից, որին սպանեց նորի մէջ, Վարդանը սկսեց դիմել ուղիղ դէպի Աշկիերթի գաւառը։ Այնտեղ գտնվում էին նրա հոյու ամենամօտ առարկաները։ Այնտեղ էր ծերունի խալֆի ընտանիքը, որի մէջ անցուցել էր այնքան չատ բախտաւոր ժամանակներ. այնտեղ էր գեղեցիկ Լալան, որին տուել էր իր ամբողջ սիրաը. այնտեղ էին իր սիրելի ընկերները, որոնց հետ ուխտել էր անձնազոհութիւն մի սուրբ գործի համար,—բոլորը այնտեղ էր, ինչ որ Վարդանի համար պաշտելի էր, ինչ որ նրա համար նուիրական էր....

Բայց ինչ վիճակի մէջ թողեց Վարդանը այդ բոլորին, երբ ինքը չզինայակապ տարվեցաւ թուրքաց զինուորական գործակատարի մօտ,—Ներուն խալֆի իր որդիների հետ բանտարկված էին, նրա ընտանիքը ցրիւ էր եկած և իւրաքանչիւրը մի տեղում թաքնված էր. Լալայի բախտը կախված էր երկու որսորդների՝ Թօմաս էֆենդու և քուրդ բէկի զաղանային մրցութիւնից. պ. Սալմանը կալանաւորված էր. Մէլիք-Մանսուրը իր խումբով գնաց նրան ազատելու. յաջողեցաւ արդեօք, թէ ոչ, այդ մասին ոչինչ չը գիտէր Վարդանը։

Բոլորին թողեց նա մի թշուառ, օրհասական դրութեան մէջ։ Այն օրից անցել էր մի և կէս ամիս, և նրանց մասին ոչինչ տեղեկութիւն չունէր։ Այդ մի և կէս ամսվայ մէջ ոչքան փոփոխութիւններ եղան, ոչքան անցքեր անցան։ Թուսները պատերազմ հրատարակեցին Թուրքերի դէմ։ Գեներալ Տէր-Ղուկասովի յաջթական զորքերը տիրեցին Բայազէդի և Աշկիերթի ամբողջ գաւառները և մօտեցան Էրզրումին։ Ճնշված, հարստահարված հայ ժողովուրդը, անցնելով ռուսաց իշխանութեան ներքոյ, սկսեց ազատ չունչ քաշել։ Ցանկարծ պատերազմի բախտը փոխվեցաւ։ Գեներալ Տէր-Ղուկասովը ստիպվեցաւ Թոդնել իր տիրած երկիրները և վերադառնալ ռուսաց սահմանի վրա։ Եւ Նրա ապրիլի 18-ին տիրած Բայազէդը յունիսի 27-ին կրկին անցաւ Թուրքերի ձեռքը։

Վերջին անցքերից Վարդանը տեղեկութիւն չունէր։ Նա չը գիտեր, թէ գեներալ Տէր-Ղուկասովի զորքերի տեղաւորութեան ժամանակ ինչեր պատահեցան։ Նա չը գիտէր ալաշկերտցոց թշնաւոր գաղթականութիւնը և այդ գաղթականութիւնը առաջ բերող տխուր պատճառները։

Անցքերը ամենակարճ ժամանակի մէջ զարմանալի փոփոխութիւն ստացան։

Վարդանը, երկու և կէս ամիս առաջ, չզինայակապ, թուրք զինուորներով չրջապատված, ծերունի խալֆի տնից տարվեցաւ թուրքաց զինուորական գործակալի մօտ։—Ներուն խալֆի իր որդիների հետ բանտարկված էին, նրա ընտանիքը ցրիւ էր եկած և իւրաքանչիւրը մի տեղում թաքնված էր. Լալայի բախտը կախված էր երկու որսորդների՝ Թօմաս էֆենդու և քուրդ բէկի զաղանային մրցութիւնից. պ. Սալմանը կալանաւորված էր. Մէլիք-Մանսուրը իր խումբով գնաց նրան ազատելու. յաջողեցաւ արդեօք, թէ ոչ, այդ մասին ոչինչ չը գիտէր Վարդանը։

Բոլորին թողեց նա մի թշուառ, օրհասական դրութեան մէջ։ Այն օրից անցել էր մի և կէս ամիս, և նրանց մասին ոչինչ տեղեկութիւն չունէր։ Այդ մի և կէս ամսվայ մէջ ոչքան փոփոխութիւններ եղան, ոչքան անցքեր անցան։ Ռ

տաՀարող, ժլատ և երկչոտ։ Նոյն տպաւորութիւնն ևս գործելու է Հրէաների վրա։ ուրեմն ինչ Հարկ կար իսկզբանե տանջանքի վիրաւորել Հրէաների ազգային զգացմունքը։

Մենք մոռացանք յիշել, որ յուշարար պ. Մատինեանցը ընծայ ստացաւ մէկ ոսկի ժամացոյց։

***

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

—

9 ապրիլի

Գրուցէ «Մշակի» ընթերցողներին յայտնի չը լինի, որ Մոսկվայում կայ մի Գասպարեան Անկեւանոց, որի հիմնադիրը կտակել է մօտ 60 հազար բուբլի այն նպատակով, որ այդտեղ ապաստան գտնէին անտէր, միանգամ և անկեալ մսկովսկոյ հայեր։ Այս անգամ ես կամում մի քանի հետաքրքրական տեղեկութիւններ հաղորդել այդ բարեգործական հիմնարկութեան մասին։—Ցիչեալ անկեւանցը՝ որ հիմնված է 1875 թ. ունի կայսերական կանոններ և առանձին կառավարութիւն, որ յանձված է 5 անդամից բաղկացած խորհրդարանին։ Անդամներին ընտրում է հայ ժողովուրդը՝ երեք տարի ժամանակով և իւրաքանչիւր տարի հաշիւ է պահանջում այդ անդամներից անկեւանցի հիմնական և անտեսական վիճակի վերաբերմամբ։ Խրատքանչիւր տարվայ նման՝ այս տարի ևս—մարտի 23-ին կայացաւ տարեկան ժողովը՝ ուր հաւաքվել էր բաւականին բազմութիւն հայ ժողովրդից։ Հաշիւները՝ սովորական ձեով ընդունվելուց յետոյ՝ պ. Գ. Քանանեանցը յայտնեց, որ մի առաջարկութիւն ունի անելու ժողովին, այն է—կարելի չէր արդեօք ընդարձակել Գասպարեան անկեւանցի այն յօդուածը, որ թոյլ է տալիս եկամուտից ազատրդ մը նոցած գումարը ծախսել անկեւանցից դուրս հարկաւորած պետդրքերի վրա, օրինակ՝ օգնել ոչ միայն չքաւոր հիւանդին, կամ զաւակաւոր անգամայրուհին, այլ և այնպիսի չքաւոր անձանց, որոնք նոյնպէս կարօտութիւն ունեն թէ կենսական և թէ մանաւանդ մասաւորական պիտոյքների։ Եւ որպէս զի կարելի լինի իրագործել այս առաջարկութիւնը՝ պարտը առաջարկում է անդամներ հրաւիրել մսկովսկոյ հայերից՝ տարեկան մի որոշ գումարով։—Այս միջոցով նա յոյս ունի բաւականին փոր ժողովել և հոգալ այնպիսի պիտոյքներ, որոնք դուրս են Գասպ. Անկեւանցի կանոնադրութիւնից։—Այդ առաջարկութիւնից յետոյ սկսան խօսել և քննել, թէ որքան իրագործելի են այս պայմանները։ Անուշնտան սկսաւ խօսել արժ. հայր Սուրբենանցը։ Նա յայտնեց, թէ ինքն ևս ունի անելու մի առաջարկութիւն, որի նպատակը հանրաւոր մի և նոյնն է, ինչ որ նախընթաց առաջարկութեան, միայն ձեր և իրագործելու միջոցը այլապէս է։ Նա ասաւ, որ ինքն նախագիծ է կազմել մի բարեգործական ընկերութեան, որ ցանկալի կը լինէր հիմնել Մոսկվայի հայերի մէջ—նախ չքաւոր պանդուխտ հայերին և անանկ ընտանիքներին օգնելու և ապա հայազգի երկու սեռին պատանեաց ուսումներին և ուսանողներին նիւթական նպաստ հայթայելու նպատակով։ Ընկերութեան եկամուտը կը կազմուի պատուաւոր անդամների մուտքագ և տարեկան տուրքերից, կամաւոր նուիրատուութիւններից և եկեղեցում տուփերով ժողոված նուէրից։ Պատուաւոր անդամներ հրաւիրելու է բոլոր հայարտակ քաղաքներից, և այլն։

Ժողովը՝ լսելով այս երկու առաջարկութիւնները, հաւանութիւն տուեց նոցանց նպատակին և որպէս զի ուելի մանրամասն քննվին այդ խնդիրները և պարզվին այն մութ տեղերը, որոնք տեղի տուին երկար վիճաբանութեան—վճռեց մի յանձնաժողով ընտրել և նրան յանձնել ցիչեալ երկու առաջարկութիւնների քննութիւնը.—արդեօք, որն ուելի իրագործելի է և ներկայ պահանջներին յարմար, ինչ օտանձնի ձեռնտու է փոր ձեռք բերելու այս կամ այն միջոցը և այլն։

Յանձնաժողովի անդամ ընտրվեցան հայր Սուրբենանցը, պ. պ. Գ. Քանանեանցը, Ն. Ներսիսեանցը, Ջ. Մսերեանցը և Աւաքեանցը։ Յանձնաժողովը արդէն մի քանի նիստեր ունեցաւ. բայց դեռ որոշի յայտնի չէ, թէ ինչ է վճռել և ինչ կարգադրութիւն արել։ Ասում են, որ շուտով ընդհանուր ժողով է վիճելու։ Ցանկալի է, որ յանձնաժողովը նոր ընկերութեան խնդրի վրա առանձին ուշադրութիւն դարձնէր և ասխատէր իրագործել՝ որքան հնար է։ Մենք հաւատացած ենք, որ Մոսկվայում գոյացեալ չէ բարեգործական ընկերութիւն հիմնելու, ամենավերջը մասը—փողը—այստեղ ուելի դիւրին է ձեռք բերվում, քան որ ելս այլ տեղ. բայց միթէ այստեղի հասարակութիւնից չեն գտնվի 5—10 մարդիկ, որ կաւավարէին այդ ընկերութիւնը։ Ուրեմն յանձնաժողովին մնում է եռանդով ասխատել այդ խնդրի վրա և ոչինչ ջանք չը խնայել հնար դնելու այնպիսի մի հիմնարկութեան, որ եթէ ոչ այժմ, գոնէ մի ժամանակ կարող է մեծ օգուտ բերել թէ Մոսկվայի հայերին և թէ մանաւանդ մերձենալ պանդուխտ ուսումնասէր երիտասարդներին և օրիորդներին։

Խ.

ՆԱՄԱԿ ԳԱՆԶԱԿԻՑ

—

18-ին ապրիլի

Մարեխի երեսաւ. լուրը ընդհանուր տարափ է գցել գանձակեցոց վրա. թողնենք գանձան կողմերից մեզ հասած անմիջիաբ լուրերը և խօսենք միայն «Շիրաս» անուանած տեղի վրա։ Այդ հողը ընկած է Գանձակից վեց վերստաչափ հեռաւորութեամբ։ Ներքև դէպի Ղարաբաղի ճանապարհը, ականատեսները պատմում են, որ մի քառասունմի վերստաչափ տարածութեամբ այդ դաշտումը մարեխը զուրս է եկել, դեռ չատ մանր են և կատարելու համար ամենայարմար ժամանակն է։ Չէ կարելի չը գովել ստոիկանութեան եռանդը այդ մարդասիրական ազգի թշնամիներին ոչնչացնելու համար. ահա մօտ երկու չարաթ է օրական 40—50 մարդ քաղաքից թաղապետների հետ գնում են յիշեալ դաշտը, տանում են իրենց հետ ստոիկանութիւնից նախապատրաստած նաւթը և հրուրը, նախ մարեխը ցախ-ուելիներով սրբում, ժողովում են մէկ կալչափ տեղ, ապա նաւթը ածելով հրուրի վրա վառում և մարեխի վրայով քաշ տալիս։ Այս միջոցը չատ և չատ է պրում։ Ասում են, որ կամիտեթից նախապատրաստած գործիքը մարեխ կոտորելու համար բոլորովին անգուտ է և չը նայելով որ ամեն օր կոտորում են միւս օրը տեսնում են գարձեալ նոյն չափով զուրս եկած։ Միակ միջոցը դարձեալ այն է, որ ժողովուրդը որ անցեալ տարի մարեխի վրա նայում էր իբրև երկրից եկած պատժի և մահացու մեղք էր համարում նորան ձեռք տալը, այժմ փոյթով դասնումեան դասը առնելուց յետոյ մասամբ թողեց այդ նախապաշարմունքը. մեծ եռանդով զինվորում է իր թշնամուն և անխնայ կոտորում է։ Եթէ այսպէս չարունակվի, յուսալի է, եթէ ոչ բոլորովին, գոնէ մեծ մասամբ կը ոչնչացնեն։

Դեռ մարեխի սերմը բերելը չարունակվում է. չէ կարելի չնորհակալութիւն չանել մեր պ. քաղաքապետին և չը գովել նորա եռանդը և անձնանուիրութիւնը այս գործի մէջ։ Ժողովուրդը զրաւվելով քաղաքապետի յորդորանքներից, խրախուսանքներից և առատ վարձատրութիւնից կրկնապատկում է իր աշխատանքը. այժմ բերում են օրեկան մօտ 40—50 պուդ, մինչև այժմ մայրաքաղաքապետի ձեռքով գնվել է ուելի քան 800 պուդ սերմ, իւրաքանչիւր պուդը 10 բուբլով. այս մարեխի գուրս գալու ձանի վրա հարիւրը դարձեալ բարձրացաւ։

Այսպիսի մի նեղ ձգնաժամում, որ ամենաուսակ պատմութիւններից անփախելի է, քաղաքապետի թաղը բոլորովին ազատ է, միայն երեսնապէս, որ սովածութիւնից և անհարութիւնից ստիպված ալիւրի կամ թխած հացի զողութիւնը էր վիճում, այն էլ վերջացաւ. այսպիսի խաղաղութեան համար մենք՝ թաղեցիքս պարտական ենք թաղապետ ն...բէկի Մ. Շ....եանցի արիութիւնը. այս պարտը գովելի է նորանով, որ պատահածները առանց բանալու չէ թողում։

Թանգալիքը տարածվելով Գանձակի մերձաւոր գիւղերի մէջ նորանց բնակիչներին բնչ է դէպի Գանձակ. այժմ ամեն մի քայլափոխում մարդ պատհում է փողոցներում խուժերով գիւղացիների, որոնք, ողորմութիւն հաւաքելով, ապրում են։

***

ՆԱՄԱԿ ԹԵԼԱՒԻՑ

—

18 ապրիլի

Տարւոյս փետրվարի 26-ին Տէր-Աբել Սարգիսեանի ձեռքով թէլաւից ուղարկվեցաւ մեր խրամբարութեանը յօգուտ սովալուկների 304 ր., Այդ գումարից մենք խնդրել ենք 100 ր. յատկացնել «Արարատեան» ընկերութեանը, ուրեմն յօգուտ սովալուկների մնաց միայն 204 ր.։ Այդ նուէրը ուղարկուց յետոյ թէլաւում քահանաներից և ազնուականներից կազմակերպվեցաւ մի մասնաժողով ստորագրութիւնը չարունակելու։ Մի և նոյն ժամանակ գործակալի անունով կոնսիստորից ըստացվեցաւ մի ժապաւենաւ մատեան մի և նոյն նպատակի համար, ինչպէս տեղեկանում ենք, չորս քահանաների, տասնչորս գործակալ հոր, տէր-Աբելի-տէր-Կարապետի և տէր-Յովսէփի մինչեսդրութեամբ եկեղեցիներում հաւաքվել և մուծվել է այդ մատեանի մէջ մինչև 265 ր.։ Այդ գումարը կարծեմ արդէն ուղարկված է կոնսիստորը, բայց նուիրողները ցանկանում են, որ այդ փողը յանձնվի մեր խրամբարութեանը և հրատարակէ նրանց ազգանունները, թէ որքան կը յարգէ կոնսիստորը ժողովրդի իրաւացի պահանջը և ցանկութիւնը—մենք այդ չը գիտենք։ Մենք լսում ենք որ մինչև անդամ անբարեկամութիւն է ծագել ժողովրդի և «Հրի մէջ խեղդվող մարդուն չափից բռնել կ մեծ մխիթարութիւն է»։ Հոլիի պատմութիւնը որքան ցաւալի և որքան դառն լինէր, այսուամենայնիւ, ազդեց վարդանի մէջ յոյսի մի փոքրիկ նշոյլ։—Դեռ ամեն ինչ կորած չէ... մտածեց նա վարդանին յայտնի էր, որ ծերունի խաչն իր երկու որդիների՝ Հայրապետի և Ապօի հետ պէտք է բանտարկված լինէին, բանտը կարող էր պատուպարան լինել Նրանց քրդերի բարբարոսութիւնից զերծ մնալու, եթէ նոյն իսկ բանտի մէջ նրանց սպանած չը լինէին։ Նրան յայտնի էր նոյնպէս, երբ խուզարկուները հանդուգնութեան ներքոյ սաթի ծերունի խաչի տունը, նա հեռացրեց իր անոյշ կանանց սեռը, որոնք անշուշտ պէտք է ծածկված լինէին բարեկամների և ազգականների մօտ, և Լալային անտարակոյս իրանց հետ տարած կը լինէին, և այսպէսով ազատ կը մնային ծերունու տանը հասած աղէտների դժբախտութիւնից։ Բայց ինչ կը լինէր նրանց վիճակը, եթէ մի և նոյն դժբախտութիւնը պատահած լինէր և այն աների հետ, ուր պատսպարված էին նրանք...

Հոլիի խօսքերի մէջ մի մխիթարական կէտ ևս կար. գգիւղացիների մէկ մասը կոտորեցին. մէկ մասը գերի տարան. չատերն էլ փախան և ազատվացան, ասաց նա։ Գուցէ այդ փախստականների թիւում լինէր և խաչի ընտանիքը, մտածում էր վարդանը, գուցէ Լալան ևս նրանց մէջ լինէր Բայց ուր գնացին, որտեղ փախան, այդ հարցերը սխեցին տանջել վարդանին։ Հոլիները մի որոշ բացատրութիւն տալ չը կարողացան։ Անդրբերը պատասխանել էին գիւղերով և անքան յանդիմանվի կերպով, որ ամեն ինչ թաղված էր խաւարի և մթութեան մէջ։ Բայց Վարդանը իր գոյու ժամանակ նկատեց, որ Աւաչերտի ամրոցի գաւառը դատարկված էր հայերից։ Անկարելի էր, որ բոլորին կոտորած կամ գերի տարած լինէին, որովհետև պէտք է տեղի ունեցած լինէր մի սարսափելի գազանութիւն,—դէպի որ կողմը, դէպի որ երկիրը...

(կը չարունակվի)

տանջրով զարկեց նրա գլխին, և լուսաւոր աչխարհը մթնեց նրա առջեւ։ Նա այլ ևս ոչինչ չէր տեսնում, նա այլ ևս ոչինչ չէր զգում։ Նա իր մարմինը մեքենաբար ցած թողեց մի թուփի վրա և երկար, գլուխը երկու ձեռքով բռնած, զարնվում էր խորհրդաւորային ապաւորեան մէջ։ Ցանկացած նրան երեսմաստ նաղելի պատկերը, նոյնպէս տխուր, նոյնպէս յուսահատ և նոյնպէս արտասուալից աչքերով, որպէս տեսել էր նրան այն վերջին գիշերում, պարտէզի լռութեան մէջ, երբ նա իր աղաչաւոր թեքերը փաթաթած ոտքերի եւրիտասարդի պարանոցին, ասում էր նրան. «տար ինձ...տեսացրու այդ երկրից...ես վախենում եմ քրդերից»...Ինչու չը տարաւ նրան Վարդանը, ինչու թողեց նրան Վարդանը....Վարդանը այժմ այդ խորհել չէր կարող. չուարման մէջ կաչկանդվում է, դադարում է մտքը։

Բայց որքան դառն միտքներ զարթեցնում էին նրա մէջ այդ տխուր աւերակները։ Շատ ժամանակ չէր անցել, որ նրանք չէն ու հաստատ էին, չատ ժամանակ չէր անցել, որ նրանց մէջ ընակվում էր մի հոյակապ ընտանիք լի և խաղաղական կեանքով։ Ինչ եղաւ, ուր էր այժմ այդ ընտանիքը։ Նա աչք ձգեց կանանոցի վրա, որի ծխից և մուխից մրոտված չորս պատերն էին միայն մնացել. առաստաղը ինած էր։ Այստեղ ծերունու բազմաթիւ հարսները, աղջիկները և թոռները, ամբողջ օրը մի կենդանի չարժողութեան մէջ, վժվժում էին, գործում էին, ասխատում էին, և միշտ ուրախ էին, որովհետև ապրելուի կարօտութիւն չունէին։ Այժմ այլ ևս չէր լսվում ոչ երեխաների ամբուլը և ոչ էլ հոգատար մայրերի զգուաւոր ձայները։ Նա իր հայացքը դարձրեց ծերունի խաչի օջախի վրա, որ բոլորովին կործանված էր։ Նա յիշեց այն ազնվագի գիշերները, երբ ինքը պ. Սալմանի, տանուտէրի և նրա որդիների հետ, այդ օջախի մէջ, ջերմ զրուցներ անելիս վիճում էին, խորհում էին, և հարիւրաւոր ծրագիրներ էին պատրաստում թշուառ ժողովրդին իր ներկայ տառապանքներից ազատելու, և նրան մի բախտաւոր կեանք ստեղծելու համար։ Իսկ այժմ բոլորը ոչնչացած էր տեսնում, թէ խորհողներին և թէ խորհուրդը...

Ահա այնտեղից մարդիկ են երեւում. Մինչև այն բոլորն ամրողջ գաւառում ոչ մի մարդկային արարած չը տեսաւ վարդանը։ Աւերակների մէջ մարդիկ էին երեւում։ Այդ բաւական ուրախացրուց վարդանին։ Նա մտածեցաւ։ Մի քանի ողորմելի քրդեր, բրիչները ձեռք առած, փորում էին տան փլատակների հողակոյտերը։ Վարդանը ճանաչեց նրանց։ Դրանք ծերունի խաչի հովիներն էին իրանց կնիկների և երեխաների հետ։ Ջուամարդիկը փորում էին հողը, իսկ կնիկները նրանց մէջ իրենց էին որոնում Հողեղէն կործանված տան մէջ դեռ չատ բաներ մնացել էին հողի տակ ամրանց տրվելու։—

—Աստուած ուժ տայ, ասաց Վարդանը ողջունելու այն ձեւով, որպէս ողջունում են բանտարկեալներին։

—Բարով եկար, պատասխանեցին նրան։

—Ինչ էք պտում։

—Ձեր բարի աչքերով տեսնում էք, պատասխանեցին քրդերը, չարունակելով իրանց գործը։

Վարդանը դառնալով քրդերից մէկին, հարցրեց.

—Քանանում ես ինձ, ասա։

—Ինչպէս չը ճանաչել քեզ, ազա, դու մեր տիրոջ տանուտէր խաչի բարեկամն էիր, չատ անգամ այս տանը ապրանք էիր բերում ծախելու, և ամեն անգամ չէիր մոռանում քո ծառայ Լալի երեխաներին մի բան բաշխել։—Ցեռ, այդ էլ քո տունն է, նա ցոյց տուեց իր կնոջ հագուստը, որ կարված էր կարմիր զոլաւոր չիթից։

Վարդանը սկսեց հարցնել, թէ ինչ պատահեց այս տան հետ, ինչու այս գիւղը այսպէս աւերակ դարձաւ, ինչ եղան նրա ընակիչները։

Հովիւը բրէչը դրեց գետնին, սրբեց ճակատի քրտինքը և նստեց, կարծես, նրա պատմութեան համար բաւական հանգստութիւն պէտք էր։

—Թող մեր թշնամիներն էլ չը պատահի այն, ինչ որ պատահեցաւ այս տան հետ, ասաց նա ցաւալի ձայնով։—Մենք, իրան ասեմ, չը գիտենք բոլորը. մենք այստեղ չէինք. մենք ոչխարները տարել էինք սարը արածցնելու։ Երբ մութը պատեց, հօրը քշում էինք դէպի գիւղը. (այն գիւղը իմ կինը մի վատ երազ էր տեսել, ես միշտ ապատում էի, որ մի չար բան պիտի պատահի)։ Դեռ գիւղին չը հասած, յանկարծ յարձակեցան մի խումբ քրդեր և սկսեցին թալանել հօրը։ Ես իմ ընկերների հետ վազեցինք դէպի գիւղը օգնելու։ Հասնելու ցնծանք կրակը բռնել էր բոլոր գիւղը և ամեն կողմից փաչվում էր։ Ցնծանք՝ քրդերով լցված էր ամեն տեղ։ Շտապեցինք դէպի այդ տունը, տեսանք, նոյնպէս փաչվում էր. ոչ մի կողմից հնար չը կար ներս մտնելու։

—Ինչ եղան տանտերքը։

—Թող մեր որդիների գլխին գայ, եթէ նրանց մի բան պատահած լինի։ Ցանուէր խաչն Հայրապետի և Ապօի հետ տանը չէին։ Նրանց գնա չատ օրեր առաջ տարել էին գատաւորի մօտ։ Ասում են, որ բանտումն էին։ Կնիկներից նոյնպէս տանը ոչ ոք չը կար։ Ցանը մնացել էին ծերունու միւս որդիները. նրանց հետ ինչ պատահեց,—մեզ յայտնի չէ։ Մենք եկանք և տունը կրակի մէջ տեսանք։

—Մեր տէրը՝ ծերունի խաչն բարի մարդ էր, չարունակեց հովիւը,—նա ոչիրան վախենում էր Աստուծուց, որ մրջիւն էլ կոխ չէր տայ։ Ամենը այս տան մէջ բարի էին, ճանաչերին էլ չէին վիրաւորում։ Մեզ պահում էին իրանց որդիների պէս։ Բայց թող անիծվեն էշիրաները *). ամեն ինչ տանկուվրա արեցին... ամեն բան փչացրին...

—Ինչ պատահեց գիւղացիների հետ։

—Գիւղացիների մէկ մասը կոտորեցին, մէկ մասը գերի տարան, չատերն էլ փախան և ազատվեցան.

*) Էշիրաթ կոչվում են վայրենի, վրանաբնակ քրդերը, որոնք լաւ համարում չունեն իրանց հասատարական ցեղակիցների մօտ, որովհետև այս վերջինների հետ վարվում են նոյնպէս բարբարոսաբար, որպէս օտարների հետ։

ասաց նա։ Գուցէ այդ փախստականների թիւում լինէր և խաչի ընտանիքը, մտածում էր վարդանը, գուցէ Լալան ևս նրանց մէջ լինէր Բայց ուր գնացին, որտեղ փախան, այդ հարցերը սխեցին տանջել վարդանին։ Հովիւները մի որոշ բացատրութիւն տալ չը կարողացան։ Անդրբերը պատասխանել էին գիւղերով և անքան յանդիմանվի կերպով, որ ամեն ինչ թաղված էր խաւարի և մթութեան մէջ։ Բայց Վարդանը իր գոյու ժամանակ նկատեց, որ Աւաչերտի ամրոցի գաւառը դատարկված էր հայերից։ Անկարելի էր, որ բոլորին կոտորած կամ գերի տարած լինէին, որովհետև պէտք է տեղի ունեցած լինէր մի սարսափելի գազանութիւն,—դէպի որ կողմը, դէպի որ երկիրը...